



Армянский Колледж

+7 904 506 91 28

Учитесь АРМЯНСКОМ говорить на ЯЗЫКЕ

Частные уроки армянского языка
тел. 8 904 509 68 76

Գրական անկյուն



Սոնա Հեկտորի Կարապետյանը ծնվել է Հայաստանի Հանրապետության Եղեգնաձորի շրջանի Խաչիկ գյուղում: Ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: ՀՀ Լրագրողների միության անդամ է: Հրատարակախոսական բազմաթիվ հոդվածների հեղինակ: Նրա առաջին բանաստեղծությունները տպագրվել են դպրոցական տարիներին: Նա մի քանի ժողովածուների հեղինակ է: Սոնայի հերոսը սիրո, հայրենիքի, բնության երգիչն է, անանձնական երջանկություն ունեցող, ինքնարյուն կայություն բացող՝ մարդկանց ջերմացնել ցանկացող անհատը, որի ներքին դրաման նույնքան ապրված է, հակասական, անկեղծ ու կանացի... Ճակատագրի բերումով վերջին տարիներին ապրում և ստեղծագործում է Դոնի Ռոստով քաղաքում: Ներկայացնում ենք մի քանի նմուշ Սոնա Կարապետյանի պոեզիայից:

*Իմ լեռնուհի՛ անփույթ ու քաջ,
Այդ է՛րբ բացվեցիր այդպես ուշացած,
Այդ է՛րբ ծաղկեցիր իմ վայրի ծաղիկ,
Իմ ՍՈՆԱ յար...*

ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԽՍՐՈՒՄԸ

Քեզ փնտրեցի երկար
Իմ հուշերի փոշում՝
Մանկության իմ վկա,
Խաղալիք իմ կորած...
Եվ փորձեցի հիշել
Քո պատկերը անդարձ
Մշուշներում անցած:
Արդյոք կա՞ս, թե՞ չկա...

Իմ կորած գանձերից
Գտնեմ միայն ես քեզ՝
Թեկուզ՝ փոշում կորած,
Թեկուզ՝ ջարդված, այրված,
Եվ քեզնով ետ գնամ,
Մանկությունն իմ գտնեմ,
Իմ խաղալիք՝ չեղած...
Ես քեզ որտե՞ղ փնտրեմ...

ՄԱՅՐԻԿԱ

Կապույտ աչքերով խոնարհ հայուհի,
Ինքնաբերական աղբյուր երգի ու խաղի,

Բախտոգրված էր լեռների լանջին
Ոչ թե՛ բեմերում այս մեծ աշխարհի:

Քո հոգու գանձը թարգման չունեցավ՝
Կոմիտասից ու Ջիվանուց բացի,
Սարվորի ճամփան ունկնդիր եղավ
Մեղմանուշ երգիչը շքահանդեսին:

ԼԻԼԻԹԻՍ

Դու կոունկի պես մի օր կշվես,
Եվ ես կկորցնեմ հետքդ երկնքում,
Վայրի ծաղիկ պես լուռ կարտասվես,
Ես դա կիմանամ յոթերորդ քիմքով:

Արևոտ օրեր կունենաս, անշուշտ,
Իմ վայրի ծաղիկ՝ այվան, բուրավետ,
Ուրիշի գրկում դու փուռ կդառնաս,
Ինձ համար, սակայն, միևնույն հավետ:

Եվ ամեն գարնան քո փոքրիկ շնչով
Սրտիս հոգևորության քողը կվերցնես,
Որպես ձնծաղիկ՝ գարուն ավետող՝
Աշնան մշուշից ինձ ետ կկանչես:

Եվ սլաքներս ետ կպտտվեն
Թներն արձակած՝ քե՛զ գրկելու,
Միայն քե՛զ, ըմբո՛ստ իմ վայրի ծաղիկ,
Գալիք հողմերից կրկին փրկելու:

ՄԱՅՐԻԿ

Լինեի նորից աղջնակ անհոգ,
Ինձ հետդ առած՝ յայլաղ գնայիր,

ԵՍ՝ ԱՎԱՄԱ ՃԱՄՓՈՐԴ

Վրան խփեիք մեր հերվան տեղում,
Եվ ամբողջ ամառ այնտեղ մնայիք:

Մթնելուց առաջ ջրի գնայիք
Չորաբայուր տանող նեղ արահետով,
Աղբյուրը հեռվից իր տեղը մատներ՝
Խոխոջուն ջրի անուշ վետով:

Եվ մեր յայլաղում իջներ գիշերը՝
Լցված կանչերով մեծի ու մանկան,
Հովիվներն շտապ իրար ձայնեն,
Մշուշը պատեր ամեն մի վրան:

Արևից առաջ ճամփա ընկնեիք,
Դիմացի սարը՝ բանջար քաղելու,
Քույրս հրձվանքից ձորը գլորվեք,
Ծիծաղը թռչեք հեռու լեռներում:

...Եվ թանաքագույն դաղձեր քաղեի՝
Հալվող ձյան բերնից՝ հայրիկիս համար,
Եվ սինձ, և՛ բանջար, մանդակ ու բոխի,
Վայրի ծաղիկներ՝ անթիվ – անհամար:

Եվ երջանկության մի մեծ կապոցով
Թրջված ու հոգևած սարից իջնեիք,
Մինչ կիթն ավարտվեք, դու տուն դառնայիր՝
Բանջարը՝ մաքրած և հյուսած լինեի:

Թող քո վրանում միշտ կարգ ու կանոն,
Մաս – մաքուր փայլող լամպի ապակի,
Պղինձն օջախին թող արդեն ետար,
Հայրս ներս մտնեի՝ ուսած յափնջին:

Հացի սփռոցը բացվեք կարպետին,
Կաթնահունց լավաջ դրվեք կեստրոնում,
Եվ թոնրած գաթա, պանիր ու մածուն,
Գառան խաշլաման՝ ամենավերջում:

Ապա պահանջեր հայրս քչախոս,
– Թամարս պիտի եսօր նվագի:
Թամարս էլ ելնեք տեղից սուս ու փուս.
Եվ օբան դառնար հարսանքատեղի:

Ո՛նց էր նվագում և հետև էլ երգում,
Հսկա ակորդոն՝ մի մատ երեխայ,
Հիանում էին հավաքված կանայք,
– Ես տեսակ համերգ ոչ մի տե՛ղ չկա:

Լինեի, ա՛խ լինեի «էն տեսակ համերգ»,
Մայրս ակամա խմբավար լինեի,
Մեր գուսաններին հերթով հիշեիք,
Եվ ոչ մի սխալ նոտա՝ չներեր:

Իսկ առավոտյան ծլկեիք ձորը՝
Ոսկե գետակին մեր այցելության,

Հատակից ոսկե քարեր հանեիք,
Եվ տուն դառնայիք «մեծ հարստությամբ»:

Դրսում թողնեիք ցող ու եղյամի
Արծաթ սավառը՝ արդեն ձմրթված,
Բոբիկ ոտներով վրան մտնեիք,
Թնդար գայրոյթո՛ր – Ինչո՞ւ ուշացաք...

Սա խրատ լինեի, որ Աղանքարից՝
Թափառախմբով շուտ տուն դառնայիք,
Բայց՝ չհասցնեիք, մութն ընկնեիք էլի,
Եվ մեզ ներելու պատճառ փնտրեիք:

... Լինեի նորից աղջնակ անհոգ,
Ինձ հետդ առած՝ յայլաղ գնայիր,
Վրան խփեիք մեր հերվան տեղում,
Եվ ամբողջ կյանքս այնտեղ մնայի...

ԱՐԵՎ ՏՍԻՍԱ

Տարիներ հետո վերադարձել եմ...
Ուր որ է պիտի մեր տանը հասնեմ,
(Չդավաճանի ինձ սիրտս հանկարծ):
Մոտեցա դանդաղ՝ մեկ էլ ի՞նչ տեսնեմ...
Մեր տան առջևի թթենին չկա...
Տատիս՝ թթենին...

Եվ քարն էլ թափուր, թափուր ու դատարկ
Ուր տատս նստում՝ ժամերով երկար
Գուլպա էր գործում՝ բո՛ւլոր, բոլորի՛-
Նաև ինձ համար...

Չկար թթենին. աշխարհը մթնեց...
Ո՞ւմ ձեռքը գնաց թթենին կտրել...
... Քո նստած քարին նստեցի հոգևած,
Տխուր լաց եղա մինչև լուսաբաց,
Ոչ-ոք դուրս չեկավ ու ինձ չգրկեց,
Ոչ-ոք՝ մատա՛ղ քեզ, – չասաց, չլացեց...
– Տատ ջա՛ն, ի՞նչ անեմ, սիրտս պայթում է,
Քեզ որտեղ փնտրեմ՝
Խիղճս խայթում է...

Ո՞նց քեզ թողեցի պատի տակ անտեր,
Ու ես գնացի «լավ կյանքի» հետև...
Հիմա եկել եմ տխուր ու դատարկ,
Ես քեզ եմ փնտրում ու իմ թթենին,
Իսկ չհասկացա ես այն ժամանակ.
– Լավ կյանքը մնաց այս դռան շեմին...
Այս դռան շեմին, ուր ինձ ճամփելիս,
Ոչ ոք դուրս չեկավ հարևաններից...
Տատս էր լացում՝ որբի պես տխուր,
Եվ իմ թթենին՝ լուռ ու գլխիկոր...

Սոնա Կարապետյան

Օրերի հետ

Հայաստանը «Մանկական եվրատեսիլ» – ին կներկայացնի Միքայել Վարդյանը

«Մանկական եվրատեսիլ» երգի միջազգային հեղինակավոր մրցույթին այս տարի Հայաստանը կներկայացնի Միքայել Վարդյանը, տեղեկացնում է Առաջին ալիք Հասարակայնության հետ կապերի բաժինը: Միքայելի ամենամեծ երազանքն արդեն իրականություն է, նա 2012 թ-ից սկսած մասնակցել է «Մանկական եվրատեսիլ»-ի հայաստանյան բոլոր փուլերին, սակայն բաղձալի երազանքին հասնելու համար մի քանի տասնորդական միավորներ չեն բավականացրել:

Այս տարի Հանրային հեռուստաընկերության ստեղծագործական խմբի որոշմամբ հենց նա կլինի հայաստանյան պատվիրակը ճանաչված և սիրված մրցույթում:

12-ամյա Միքայելը երաժշտության ասպարեզում իր առաջին քայլերն արել է

դեռևս 6 տարեկանից, սկսել է երաժշտական կրթություն ստանալ, հետագայում մասնակցել միջազգային մրցույթների:

Միքայելը 2013 թ-ից մասնակցում և ամենատարբեր մրցանակներով է վերադառնում Հայաստան: Նա 2012 թ-ին մասնակցել է «Նոր ալիք» մրցույթի հայաստանյան ընտրական փուլին:

2013 թ-ին մասնակցել է Բուլղարիայի Վառնա քաղաքում կայացած մանկական միջազգային Golden Sparkles մրցույթ-փառատոնին, որտեղ նա միաժամանակ 3 մրցանակ է արժանացել կատարողական մրցույթում 2-րդ տեղ է զբաղեցրել, երգի մրցույթում 3-րդ, ինչպես նաև արժանացել է մրցույթի «Ամենագրավիչ մասնակից» հատուկ մրցանակին: 2014 թվականին Միքայելը մասնակցել է

Վիտեբսկ քաղաքում անցկացվող «Մլավյանսկի բազար» միջազգային մրցույթին, որտեղ ներկայացրել է Հայաստանը և գրավել 3-րդ տեղը: Միքայել Վարդյանը սովորում է Նաիրի Զարյանի անվան թիվ 130 հիմնական դպրոցում, 7-րդ դասարանում: Միքայելը նկարահանվել է ռեժիսոր Արմեն Ռոնովի ֆիլմում, կրկնօրինակել և հնչյունավորել մի շարք մուլտֆիլմեր և ֆիլմեր:

2014 թվականից նա իրեն սկսել է փորձել նաև հեռուստատեսային աշխարհում և սկսել է վարել «Փազլ» մանկական հաղորդումը:

Նա շատ է սիրում Մայքլ Ջեքսոնի և Բրունո Մարսի երգերը և ակտիվ հետևում է նրանց երաժշտական գործունեությանը:



Թամարա Ավագյան